

Հաստատված է «Լիմիթյան անոթ մենեջմենթ» ՓԲԸ
խորհրդի կողմից 2022 թվականի հուլիսի 7-ին

Փոփոխված է
**31/08/2023թ. թիվ 31.08.2023/1 խորհրդի
որոշմամբ**

«Լիմիթյան Անոթ Մենեջմենթ» ՓԲԸ խորհրդի
նախագահ՝

Կիմ Ավանեսյան



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ	3
ԲԱԺԻՆ 2. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
ԳԼՈՒԽ 2. ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	3
ԳԼՈՒԽ 3. ԿՈՆՏՐԱԳԵՆՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ	3
ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՖՈՆԴԵՐԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ	4
ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ	5
ԲԱԺԻՆ 3. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	6
ԳԼՈՒԽ 6. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՍՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	6
ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԻՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ	6
ԳԼՈՒԽ 8. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ	7
ԳԼՈՒԽ 9. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ	7
ԳԼՈՒԽ 10. ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ	8
ԳԼՈՒԽ 11. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼԸ	8
ԳԼՈՒԽ 12. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ	9
ԳԼՈՒԽ 13. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄԸ	9
ԳԼՈՒԽ 14. ԱԿՏԻՎՆԵՐԻ ՏԱՐԱՆՁԱՏՈՒՄ	10
ԳԼՈՒԽ 15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ	10
ԳԼՈՒԽ 16. ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	12

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնները սահմանում են «Լիմիթես ասեթ մենեջմենթ» ՓԲ ընկերության (այսուհետև՝ նաև՝ Ընկերություն) կողմից ներդրումային ֆոնդերի (այսուհետև՝ ֆոնդ) կառավարման գործունեության իրականացման հիմնական սկզբունքներն ու ընթացակարգերը:
2. Սույն կանոններում օգտագործվող հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքով (այսուհետև՝ Օրենք) սահմանված նշանակությունը, եթե այլ բան չի բխում կանոնների բովանդակությունից:

ԲԱԺԻՆ 2. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 2. ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Ընկերության ղեկավարները և աշխատակիցներն ֆոնդի կառավարման հետ կապված իրենց պարտականությունների կատարման ընթացքում պարտավոր են գործել՝ ելնելով տվյալ ֆոնդի մասնակիցների շահերից, իրականացնել իրենց իրավունքները և կատարել ֆոնդի մասնակիցների նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով, պատշաճ մասնագիտական մակարդակով:
4. Ֆոնդը կառավարելիս Ընկերությունն առաջնորդվում է տվյալ ֆոնդի բոլոր մասնակիցների հավասարության սկզբունքով:
5. Ընկերությունը պարտավոր է ֆոնդը կառավարելիս կայացնել միայն այնպիսի ներդրումային որոշումներ, որոնք ունեն ողջամիտ հիմնավորումներ և առավելագույնս համապատասխանում են ֆոնդի ներդրումային քաղաքականությանն ու ֆոնդի կանոններով սահմանված այլ պահանջներին:
6. Ընկերությունը պարտավոր է բացահայտել իր հետ հարաբերությունների վերաբերյալ բոլոր էական փաստերը, որը թույլ կտա հաճախորդին (ֆոնդի մասնակցին) Ընկերության ծառայություններից օգտվելու վերաբերյալ կայացնել տեղեկացված որոշում:
7. Ֆոնդի կառավարման գործընթացում Ընկերությունը պետք է առաջնորդվի ֆոնդի մասնակիցների շահերի գերակայության սկզբունքով: Ընկերությունը պարտավոր է ձեռնարկել միջոցներ՝ պոտենցիալ շահերի բախումներ առաջացնող իրավիճակներում ֆոնդերի մասնակիցների հանդեպ արդար վերաբերմունքն ապահովելու համար (տես նաև Գլուխ 3, 4, 5):

ԳԼՈՒԽ 3. ԿՈՆՏՐԱԳԵՆՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Ընկերությունը ֆոնդի հաշվին գործարքներ իրականացնելու համար կոնտրագենտ ընտրելիս առաջնորդվում է տվյալ ֆոնդի մասնակիցների լավագույն շահով:

Ընկերությունը բրոքերային ընկերություն ընտրելիս պետք է առաջնորդվի նվազագույն քայլերի սկզբունքով՝ խուսափելով գործարքների իրականացման շղթայում ավելորդ օղակների ստեղծումից:

9. Բրոքերային ընկերություն ընտրելիս Ընկերությունը պետք է հաշվի առնի հետևյալ գործոնները.
 - ֆոնդի համար լավագույն պայմաններով գործարքների կատարումը,
 - հասանելիությունն այն ֆինանսական գործիքների շուկաներին (առևտրային հարթակներին), որտեղ ֆոնդը նախատեսում է ներդրումներ իրականացնել,
 - բրոքերի կողմից տրամադրվող ծառայությունների շրջանակը,
 - միջնորդավճարները,
 - բրոքերային ընկերության՝ տեղեկատվության գաղտնիության ապահովման ընթացակարգերը, շահերի բախման քաղաքականությունը,
 - պատվերների բարդությունը,
 - գործարքներ կատարելու կարողությունները,
 - գործընկերային ցանցը,
 - ֆինանսական պատասխանատվությունը և կայունությունը,
 - այլ գործոններ, որոնք Ընկերության կարծիքով կարող են էապես ազդել ֆոնդի համար լավագույն պայմաններ ապահովելու վրա:
10. Ընկերությունը պարտավոր է նախապես էլեկտրոնային եղանակով տեղեկացնել ֆոնդի մասնակիցներին, եթե ֆոնդի հաշվին գործարքներ իրականացնելու համար ընտրում է փոխկապակցված բրոքերային ընկերություն կամ այլ կոնտրագենտ:
11. Ընկերությունը կարող է բրոքերային ընկերությունից ստանալ շուկայի մասին հետազոտություններ, ֆինանսական գործիքների գների կամ շուկայի մասին այլ տեղեկատվություն (այդ թվում՝ այդ նպատակով ծրագրային համակարգ), որի համար ֆոնդի հաշվին վճարվող միջնորդավճարը կարող է լինել ավելի բարձր՝ այլ բրոքերային ընկերությունների սակագների համեմատ, պայմանով, որ
 - այդ հետազոտությունները կամ տեղեկատվությունն անհրաժեշտ է տվյալ ֆոնդի արդյունավետ կառավարման համար,
 - միջնորդավճարի չափը (ավել վճարվող մասը) Ընկերության կարծիքով ողջամիտ է, և
 - Ընկերությունը նախապես տեղեկացնում է ֆոնդի մասնակիցներին նմանատիպ համաձայնության մասին:
12. Ընկերությունը առնվազն տարեկան մեկ անգամ ստուգում է բրոքերային ընկերության ընտրության համապատասխանությունը սույն գլխում նշված գործոններին:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՖՈՆԴԵՐԻ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

13. Ընկերության և իր կողմից կառավարվող ֆոնդի միջև կամ Ընկերության կողմից կառավարվող երկու տարբեր ֆոնդերի միջև արժեթղթերով գործարք կարող է կնքվել միայն բացառիկ դեպքերում, շուկայում ավելի լավ այլընտրանքի բացակայության դեպքում, և եթե նման հնարավորությունը նախատեսված է տվյալ ֆոնդի կանոններով:
14. Ընկերության կողմից կառավարվող երկու տարբեր ֆոնդերի միջև արժեթղթերով գործարք կարող է կնքվել միայն այն դեպքում, եթե

- գործարքը միաժամանակ բխում է երկու ֆոնդերի մասնակիցների լավագույն շահերից,
- գործարքի համար չեն գանձվում բրոքերային միջնորդավճարներ,
- գործարքն իրականացվում է ընթացիկ շուկայական գնով,
- գործարքը համապատասխանում է (չի հակասում) երկու ֆոնդերի կանոններին:

ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱԽԱՄՐՈՒՄԸ

15. Ընկերությունը կարող է համախմբել իր կողմից կառավարվող տարբեր ֆոնդերի համար արժեթղթերով գործարքներ կատարելու պատվերները՝ առավել շահավետ պայմաններով գործարքների իրականացման նպատակով:
16. Ընկերությունն իրավունք ունի համախմբել իր կողմից կառավարվող մեկից ավելի ֆոնդերի համար արժեթղթերով գործարքներ կատարելու պատվերները, եթե առկա են հետևյալ պայմանները՝
 - տարբեր ֆոնդերի պատվերների համախմբումը Ընկերության կարծիքով չի հանգեցնի որևէ ֆոնդի մասնակիցների շահերի վնասմանը, և
 - պատվերների համախմբման հնարավորությունը նախատեսված է համապատասխան ֆոնդերի կանոններով:
17. Ընկերությունը պետք է ապահովի համախմբված պատվերներով կատարված գործարքների արդյունքի արդար բաշխումը համապատասխան ֆոնդերի միջև: Այդ նպատակով հնարավորության դեպքում օգտագործվում է ըստ պատվերի ծավալի՝ ֆոնդերի միջև համամասնական բաշխումը:
18. Այն դեպքում, երբ համամասնական բաշխումը կիրառելի չէ կամ չի ապահովում արդար վերաբերմունք բոլոր ֆոնդերի համար՝ հաշվի առնելով պատվերի չափը կամ պատվերների բավարարման ծավալը, Ընկերությունը կիրառում է բաշխման այլընտրանքային մեթոդ, որը կարող է հաշվի առնել հետևյալ գործոնները.
 - տվյալ ֆոնդի իրացվելիության կարիքները,
 - ֆոնդին հասանելի ներդրումային այլընտրանքները,
 - ֆոնդի կանոններով նախատեսված սահմանափակումները,
 - ներդրման բաշխման արդյունքում ֆոնդի ներդրումային բնութագրիչների վրա էական ազդեցություն ապահովելու հնարավորությունը,
 - գործարքի ծավալի համեմատ լրացուցիչ գործառնական ծախսերից խուսափելու անհրաժեշտություն,
 - այլ գործոններ:
19. Ընկերությունը կարող է համախմբել իր հաշվին և իր կողմից կառավարվող ֆոնդի հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու պատվերները, եթե առկա են հետևյալ պայմանները՝
 - պատվերների համախմբումը Ընկերության կարծիքով չի հանգեցնի ֆոնդի մասնակիցների շահերի վնասմանը, և
 - պատվերների համախմբման հնարավորությունը նախատեսված է համապատասխան ֆոնդի կանոններով:

20. Եթե Ընկերության և իր կողմից կառավարվող ֆոնդի հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելու համախմբված պատվերը բավարարվել է մասնակի, ապա արդյունքի բաշխման ժամանակ առաջնահերթորեն բավարարվում է ֆոնդի պատվերը:
21. Կառավարիչը պարտավոր է վարել պատվերների համախմբման և բաշխման մասին գրառումներ: Յուրաքանչյուր գործարքի բաշխման մասին տեղեկությունները պետք է գրառվեն ոչ ուշ, քան գործարքի կատարման մասին հաստատումը ստանալու օրը:
22. Պատվերների բաշխման այլընտրանքային մեթոդ ընտրելու դեպքում գրառումները պետք է տեղեկություններ պարունակեն բաշխման համապատասխան մեթոդն ընտրելու պատճառների և արդյունքների մասին:

ԲԱԺԻՆ 3. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

ԳԼՈՒԽ 6. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

23. Ֆոնդի ակտիվների ներդրումներն իրականացվում են տվյալ ֆոնդի կանոններով սահմանված ներդրումային քաղաքականությանը և սահմանափակումներին համապատասխան:
24. Ֆոնդի ակտիվների ռազմավարական տեղաբաշխման գլոբալ որոշումները հաստատում է Ընկերության տնօրենների խորհուրդը:
25. Յուրաքանչյուր ֆոնդի ակտիվների հետ կապված ներդրումային որոշումը (ներդրում, վաճառք, աճանցյալ ֆինանսական գործարք, այլ գործարք) կայացնում է տվյալ ֆոնդի կառավարիչը՝ Ընկերության տնօրենների խորհրդի, Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի (տնօրենի) կողմից տրված իրավասությունների շրջանակում:
26. Յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում ֆոնդի կառավարիչը Ընկերության տնօրենին է զեկուցում իր կողմից կառավարվող ֆոնդի վերաբերյալ բոլոր էական հանգամանքները:

ԳԼՈՒԽ 7. ԳՈՐԾԻՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

27. Ֆինանսական գործիքի ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով գործիքի համապատասխանությունը տվյալ ֆոնդի ընդհանուր ներդրումային քաղաքականությանը և դրա ոգուն, դրա առանձնահատուկ բնութագրիչներին՝ շուկա, ճյուղ և այլն, ֆոնդի ռիսկի պրոֆիլին:
28. Ֆինանսական գործիքի ընտրությունը ենթադրում է հետևյալ քայլերի իրականացումը.
 - Իրականացվում է շուկայի համապատասխան սեզմենտի նախնական հետազոտություն, որի արդյունքում ֆոնդի կառավարիչը ձևավորում է հնարավոր գործիքների ցանկ,
 - ստուգվում է յուրաքանչյուր գործիքի համապատասխանությունը ֆոնդի կանոնների պահանջներին,

- յուրաքանչյուր գործիքի համար գնահատվում է իրացվելիության մակարդակը և դրա վրա ազդող գործոնները, ռիսկ/եկամտաբերություն բնութագրիչները, տվյալ գործիքի գնի վրա ազդող գործոնները և այլ էական հանգամանքներ,
 - ընտրվում է ներդրման համար առավել նպատակահարմար գործիքը,
 - որոշվում է ֆինանսական գործիքում ներդրման ծավալը՝ ֆոնդի կանոններով նախատեսված սահմանաչափերի շրջանակում:
29. Ֆոնդի ակտիվների վաճառքի որոշումը կարող է տեղի ունենալ մի շարք պատճառներով, որը ներառում է հետևյալը (սակայն չի սահմանափակվում դրանցով)՝
- ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) մարման պահանջ,
 - պորտֆելի վերաբալանսավորում,
 - գործիքի գրավչության նվազում՝ պայմանավորված եկամուտ/ռիսկ համակցության փոփոխությամբ, գների կամ շուկայական իրադրության փոփոխությամբ,
 - թողարկողի կամ գործիքի հետ կապված զարգացումներ,
 - շահավետ պայմաններով գործարքի իրականացում,
 - ներդրումային սահմանաչափերի պահպանում (խախտումից խուսափում):

ԳԼՈՒԽ 8. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՐՎՈՂ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

30. Ֆոնդի կառավարիչն իր կողմից կառավարվող ֆոնդի հետ կապված բրոքերային գործարքներ կնքելու հանձնարարականը կազմում և ներկայացնում է անձամբ:
31. Բրոքերային ընկերությանը տրվող հանձնարարականը պետք է բխի ֆոնդի կառավարման ընդհանուր տրամաբանությունից, լինի բավականաչափ հստակ և միանշանակ՝ դրա լավագույն պայմաններով իրականացումն ապահովելու համար:

ԳԼՈՒԽ 9. ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

32. Ֆոնդի կառավարիչը պարբերաբար իրականացնում է ֆոնդի ներդրումների ընթացիկ վերլուծություն և մոնիտորինգ: Դրա հաճախականությունը կախված է ֆոնդի ներդրումային ռազմավարությունից:
33. Ընթացիկ վերլուծության արդյունքում ֆոնդի կառավարիչը պետք է պարզի նոր ի հայտ եկած հանգամանքների ազդեցությունը ֆոնդում ներառված ֆինանսական գործիքի ներդրման բնութագրիչների վրա, ինչպես նաև ի հայտ եկած բնութագրիչները կամ առկա բնութագրիչների փոփոխությունը:
34. Ֆինանսական շուկայում էական տատանումների, որևէ ֆինանսական գործիքի գնի էական տատանման դեպքում ֆոնդի կառավարիչը իրականացնում է լրացուցիչ վերլուծություն: Լրացուցիչ վերլուծության արդյունքում ֆոնդի կառավարիչը պետք է պարզի նոր ի հայտ եկած հանգամանքների ազդեցությունը ֆինանսական գործիքի ներդրման բնութագրիչների վրա, ի հայտ եկած բնութագրիչները, առկա բնութագրիչների փոփոխությունը, ինչպես նաև գործիքի գնի տատանման պատճառները, գների փոփոխության կանխատեսումները:

35. Ընթացիկ կամ լրացուցիչ վերլուծության հիման վրա ֆոնդի կառավարիչը գնահատում է ֆինանսական գործիքի վերաբերյալ ներդրումային որոշումը վերանայելու նպատակահարմարությունը:

ԳԼՈՒԽ 10. ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

36. Ֆոնդի կառավարիչը պարբերաբար իրականացնում է ֆոնդի իրացվելիության դիտանցում, որի հաճախականությունը կախված է ֆոնդի տեսակից (բաց, փակ, միջակայքային), ներդրումային ռազմավարությունից (ներդրումների իրացվելիություն), շուկայական իրադրությունից:

37. Ֆոնդի կառավարիչն իրականացնում է իր կողմից կառավարվող ֆոնդի իրացվելիության ընթացիկ վիճակի դիտանցում՝ հաշվի առնելով ակնկալվող մարումները և մուտքերը, ինչպես նաև նախապես հայտնի մարումների ժամանակը:

38. Ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) հետզնման (մարման) հայտերի մասին տեղեկատվություն ստանալուն պես ֆոնդի կառավարիչը պետք է ապահովի ֆոնդի կանոններով սահմանված ժամկետում համարժեք իրացվելիության առկայությունը ֆոնդում, որը կարող է տեղի ունենալ նշվածներից որևէ մեկի միջոցով՝

- Ֆոնդում առկա դրամական միջոցներ,
- Ռեպո համաձայնագրերի կնքում,
- Արժեթղթերի վաճառք,
- Փոխառության ներգրավում,
- Ընկերության կողմից ֆոնդի նոր փայերի (բաժնետոմսերի) ձեռքբերում,
- Ֆոնդի կանոններին համաձայն այլ թույլատրելի գործիքի միջոցով:

39. Ֆոնդի կառավարիչը պետք է ընտրի այն տարբերակը, որը առավելագույնս բխում է ֆոնդի մասնակիցների շահերից:

ԳԼՈՒԽ 11. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՍԱՅՄԱՆԱՓՈՎՄՆԵՐԻՆ ՅԵՏԵՎԵԼԸ

40. Ընկերությունը պարտավոր է հետևել օրենսդրությամբ, ֆոնդի կանոններով սահմանված սահմանաչափերին և այլ ներդրումային սահմանափակումներին (ասյուլիետ նաև՝ ներդրումային սահմանաչափեր)՝ բացառելով այնպիսի ներդրումային որոշումների կայացումը, որոնց արդյունքում կխախտվեն ներդրումային սահմանաչափերը:

41. Եթե ակտիվների վերագնահատման արդյունքում պարզվում է, որ խախտվել են ներդրումային սահմանաչափերը, ապա ֆոնդի կառավարիչը այդ մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել տնօրենին (անհրաժեշտության դեպքում նաև ֆոնդի պահառուին) և ներկայացնել եզրակացություն հետագա քայլերի մասին, մասնավորապես առաջարկելով՝

- ոչինչ չանել, քանի որ շուկայի իրավիճակից ելնելով այդ խախտումը կարճ ժամանակում կվերանա,
- ոչինչ չանել և սպասել ավելի հարմար պահի այդ խախտումը վերացնելու համար,

- վերացնել խախտումը վաճառքի համար առավել նպատակահարմար գործիքը վաճառելու միջոցով:
42. Ֆոնդի կառավարիչը եզրակացության մեջ պետք է առաջարկի նաև այն ժամկետը, որից հետո կամ որի ընթացքում պետք է իրականացվի կայացված որոշման վերանայում, որը սակայն չպետք է ավել լինի 3 ամսից: Վերանայման արդյունքները ֆոնդի կառավարիչը պետք է անհապաղ ներկայացնի Ընկերության տնօրենին՝ համապատասխան որոշում կայացնելու համար:
 43. Եթե սահմանաչափերը խախտվել են Ընկերության մեղքով, ապա դրա վերականգնման հետ կապված ծախսերն իրականացվում են Ընկերության հաշվին (փոխհատուցվում են Ընկերության կողմից):

ԳԼՈՒԽ 12. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ԵՎ ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ

44. Ֆոնդի ակտիվների գնահատումը և զուտ ակտիվների արժեքի (ՉԱԱ) հաշվարկն իրականացվում է համապատասխան ֆոնդի կանոններով սահմանված պարբերականությամբ և կարգով:
45. Ֆոնդի ակտիվների գնահատման և/կամ ՉԱԱ հաշվարկի համար Ընկերությունը կարող է ներգրավել երրորդ անձանց, կամ այդ գործառույթը պատվիրակել այլ անձի՝ ֆոնդի կանոններով սման հնարավորություն նախատեսված լինելու դեպքում:
46. Եթե որևէ տեսակի ակտիվի գնահատման մեթոդը սահմանված չէ օրենսդրությամբ կամ տվյալ ֆոնդի կանոններով, ապա Ընկերությունը որոշում է դրա արժեքը բարեխղճորեն, ֆինանսների ոլորտում համընդհանուր ընդունված մեթոդների կիրառմամբ:
47. Եթե ակտիվի գնահատման համար օգտագործվում են ենթադրություններ, ապա Ընկերության ենթադրությունները և հաշվարկները պետք է լինի ողջամիտ, բավականաչափ հիմնավորված, և հաշվի առնեն ակտիվի գնի վրա ազդող բոլոր էական գործոնները:
48. Եթե ակտիվի համար առկա չէ հասանելի շուկայական գին, ապա դրա գնահատման համար Ընկերության տնօրենը կարող է ձևավորել գնահատման հանձնաժողով, որի կազմը և գործունեության կարգը սահմանում է Ընկերության տնօրենը:
49. Ֆոնդի ՉԱԱ-ն, փայի (բաժնետոմսերի) հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման գները հրապարակվում են միայն Ընկերության տնօրենի կողմից հաստատվելուց հետո:

ԳԼՈՒԽ 13. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄԸ

50. Ընկերությունը կարող է ֆոնդի կառավարման գործառույթների մի մասը պատվիրակել երրորդ անձին՝ առավել արդյունավետ կառավարման նպատակով, եթե այդպիսի հնարավորություն նախատեսված է ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ): Այդ դեպքում Ընկերությունը շարունակում է պատասխանատվություն կրել պատվիրակված գործառույթների պատշաճ կերպով և բարեխղճորեն իրականացման համար:

51. Ընկերությունն կոնտրագենտին պատվիրակված գործառույթների իրականացման նկատմամբ իրականացնում է հսկողություն, որի կարգը և պայմանները սահմանվում են պատվիրակման պայմանագրով:
52. Կառավարման գործառույթների պատվիրակման նպատակով կառավարիչը պարտավոր է նախապես ստանալ Կենտրոնական բանկի համաձայնությունը՝ ներկայացնելով գործառույթների պատվիրակման պայմանագրի պատճենը:

ԳԼՈՒԽ 14. Ակտիվների տարանջատումը

53. Կառավարիչը պարտավոր է իրականացնել սեփական ակտիվների, իր կողմից կառավարվող յուրաքանչյուր պայմանագրային ֆոնդի ակտիվների ու արժեթղթերի փաթեթի, ինչպես նաև տարբեր ենթաֆոնդերի ակտիվների առանձնացված կառավարում և առանձնացված հաշվառում:
54. Կառավարիչն իր կողմից կառավարվող ֆոնդի ակտիվներն օգտագործում է բացառապես ի կատարումն այդ ֆոնդի կառավարման հետ կապված՝ Ներդրումային ֆոնդերի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կնքված գործարքների, ինչպես նաև այդ օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված վճարների և ծախսերի և չի կարող այդ ակտիվներն օգտագործել ի շահ իրեն կամ որևէ այլ անձի:
55. Կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի ակտիվները չեն կարող բռնագանձվել կառավարչի պարտավորությունների դիմաց, բացառությամբ Ներդրումային ֆոնդերի մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգոց կնքված պայմանագրային ֆոնդի կառավարման հետ կապված գործարքներով ստանձնած պարտավորությունների: Վստահության վրա հիմնված ընկերակցության կազմակերպական-իրավական ձևով ստեղծված ֆոնդի կառավարչի անձնական պարտքերի համար ֆոնդի ակտիվներում նրա բաժնեմասի վրա բռնագանձումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով և կարգով:
56. Կենտրոնական բանկը կարող է իր նորմատիվ իրավական ակտերով սահմանել անհրաժեշտ պարտադիր կանոններ՝ ֆոնդի մասնակիցների՝ սույն գլխով նախատեսված իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար:

ԳԼՈՒԽ 15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖՈՆԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄԸ

57. Ընկերությունը ֆոնդի մասնակցին տեղեկություններ տրամադրելիս պահպանվում են հետևյալ ընդհանուր սկզբունքները՝
 - տեղեկությունները պետք է մասնակցին հնարավորություն տան հասկանալու իրեն մատուցվող ծառայության էությունը, դրա էական պայմանները և ռիսկերը,
 - տեղեկությունները չեն կարող ներկայացվել այնպիսի ձևով, որ թաքցվեն կարևոր դրույթները, ինչպես նաև տպավորություն ստեղծվի, որ դրանք ոչ կարևոր են,

- եթե տեղեկությունները պարունակում են համեմատություններ նույն կառավարչի կողմից կառավարվող այլ ֆոնդերի, այլ կառավարիչների կամ այլ կառավարիչների կողմից կառավարվող ֆոնդերի հետ, ապա
 - 1) այդ համեմատությունները պետք է լինեն տեղին, իմաստալից և պետք է ներկայացվեն անկողմնակալ ու հավասարակշռված ձևով,
 - 2) համեմատություններում պետք է նշվեն համեմատությունների համար հիմք հանդիսացած տեղեկությունների աղբյուրները:
58. Ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ տեղեկությունները պետք է ներառեն նախազգուշական դրույթ այն մասին, որ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ նմանատիպ ցուցանիշներ անպայմանորեն արձանագրվելու են նաև ապագայում: Ընկերությունը չի կարող խոստանալ ֆոնդի եկամտաբերության որևէ երաշխավորված մակարդակ:
59. Ընկերությունը ֆոնդի կառավարման արդյունքների վերաբերյալ կարող է բացահայտել հետևյալ տվյալները`
- ֆոնդի ակտիվները յուրաքանչյուր տարվա վերջի դրությամբ,
 - ստեղծման պահից միջին տարեկան եկամտաբերությունը,
 - եռամսյակային և/կամ ամսեկան եկամտաբերությունները,
 - ֆոնդի տարեկան եկամտաբերությունը,
 - տարվա սկզբից եկամտաբերությունը,
 - ֆոնդի եկամտաբերությունների տարեկան ստանդարտ շեղումը վերջին 3 տարիների համար, որի հաշվարկման համար օգտագործվում են ամսական եկամտաբերությունները:
60. Մեկ տարուց պակաս ժամկետայնությամբ եկամտաբերությունները չեն բերվում տարեկան չափման:
61. Ընկերության կողմից թողարկվող կամ պատվիրվող գովազդը պետք է համապատասխանի Օրենքի պահանջներին:
62. Ընկերության գովազդը չպետք է պարունակի ֆոնդի ներկա կամ նախկին մասնակիցների վկայություններ:
63. Սույն կանոնի իմաստով վկայություն է համարվում Ընկերության մեկ կամ մի քանի ֆոնդի մասնակիցների կողմից Ընկերության ծառայությունների վերաբերյալ հայտարարությունները, որոնք կատարվել են Ընկերության նախաձեռնությամբ կամ խնդրանքով: Սույն կանոնի իմաստով վկայություն չի համարվում անկախ երրորդ անձի կողմից Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների մասին հրապարակումները կամ հայտարարությունները, Ընկերության կողմից հաճախորդների ցանկի բացահայտումը (առանց հաճախորդի կողմից որևէ մեկնաբանության):
64. Արգելվում է Ընկերության կողմից այնպիսի գովազդը կամ հրապարակումը, որը հղում է կատարում Ընկերության` նախկինում կայացրած մեկ կամ մի քանի հաջողակ ներդրումային որոշումներին, առանց հիշատակելու նույն ժամանակահատվածում կորուստների հանգեցնող ներդրումային որոշումները:
65. Ընկերության տնօրենը սահմանում է Ընկերության կողմից օրենսդրությամբ, ֆոնդի կանոններով նախատեսված տեղեկությունների հրապարակման համար պատասխանատու աշխատակցին:

ԳԼՈՒԽ 16. ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

66. Ընկերությունը ֆոնդերի կառավարման գործունեության վերաբերյալ պետք է վարի պատշաճ գրառումներ և գրանցումներ: Դրանք պետք է Ընկերության ներքին աուդիտին հնարավորություն տան հավաստիանալու, որ Ընկերությունը կատարել է սույն կանոններով նախատեսված իր պարտականությունները:
67. Ընկերությունը պարտավոր է իրականացնել սեփական ակտիվների, իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի ակտիվների ու արժեթղթերի փաթեթի, ինչպես նաև տարբեր ենթաֆոնդերի ակտիվների առանձնացված հաշվառում:
68. Ընկերությունը պարտավոր է վարել և պահպանել հետևյալ գրառումները`
- յուրաքանչյուր ֆոնդի և ֆոնդի մասնակցի հետ կապված սույն կանոններով նախատեսված տեղեկությունները,
 - յուրաքանչյուր ֆոնդի հետ կապված ներդրումային որոշումների և կատարված գործարքների վերաբերյալ,
 - Ընկերության, Ընկերության աշխատակիցների հաշվին կատարված գործարքների վերաբերյալ,
 - սույն կանոններով, Ընկերության այլ իրավական ակտերով և գործող օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկություններ: